

## ԻՂՐՈՒԱԳ Բ.

Ի. Եւ էր Յազկերտի արքայի<sup>2</sup> հազարապետ մի Միհրներսեհ անուն, այր չարահնար եւ դժնամիտ. որոյ արկեալ ի միտս ի շատ ամաց<sup>3</sup> զխորհուրդս անաւրէնութեան, ի կործանումն եւ ի կորուստ թուլամիտ ոգւոց. որում գտեալ աւժանդակ<sup>4</sup> չար եւ սադրիչ անաւրէն թիւնաւոր բազմաժամանակեայ մտածութեան իւրում՝ այր մի ի տոհմէն Սիւնեաց, որոյ անունն էր Վարազվաղան. որով ըստ նմանութեան սատանայի, որ ի դրախտին աւճիւն խաբեաց զնախաստեղծին հաղորդն՝ նոյնպէս եւ նա նովաւ գիւրոյ դառն կամացն վճարել ջանայր զհաճոյսն: 2 Եւ էր Վարազվաղանս այս փեսայացեալ իշխանին Սիւնեաց Վասակայ. որ եւ ըստ համբաւոյ ոմանց՝ ատելութեամբ մեծաւ ասէին զկեալն ընդ միմեանս զՎարազվաղանայ եւ զդստեր իշխանին Սիւնեաց. յաղագս որոյ ծանր քինու հայեր հայր աղջկանն<sup>5</sup> ընդ փեսային իւրում եւ հնարեր սպանմամբ խնդրել զվրեժս թշնամանաց դստերն<sup>6</sup> իւրոյ, մինչեւ հալածեալ հաներ զնա<sup>7</sup> յաշխարհէս Յայոց:

3 Եւ չարիմացին Վարազվաղանայ գիտացեալ զանհնարին ոխութիւնն Վասակայ<sup>8</sup>, եւ զի ոչ կարեր հանդուրժել սաստիկ բռնութեան աներոյն, յաղագս հզարապետ ճոխութեանն, որով վարեր ի ժամանակս իշխանութեան իւրոյ՝ փախուցեալ յերկիրն Պարսից առ Միհրներսեհ հազարապետն Արեաց անկաներ: 4 Եւ վաղվաղակի խորհուրդ դիւական ի միտս արկեալ՝ առաջնորդ կորստեան աշխարհիս լիներ, ճանաչելով ի նոյն խորհուրդ չարութեան յորդոր եւ զկամսն Միհրներսեհի. մտածութիւն անաւրէն ի միաբանութիւն բանսարկուին ի մէջ առեալ՝ ուրանայր զճշմարտութիւնն եւ տարերց հաստատելոց<sup>9</sup> յԱրարչէն ի սպասաւորութիւն մարդկան, արեգական եւ լուսնի՝ երկիր պագաներ. եւ ճեղքեալ ինքնական յաւժարութեամբ ի սուրբ եւ յարդար քարոզութենէն կենաց, զոր նահատակն եւ առաքեալն Յայոց Գրիգորիոս բազում եւ մեծամեծ վիշտս կրելով՝ անձանձրոյթ աղաւթիւք եւ անգրաւ խնդրուածովք<sup>10</sup> զգայգ եւ զցերեկ վարդապետեալ սերմանեալ յամե-

1 ՁԱտ. չիք դրուագ Բ. ԲԳտ. դրուակ Բ

2 Բտ. արքայ

3 Ձ. ի միտս շատ ամաց

4 ՁԱտ. օժընդակ

5 Ձ. աղճկանն

6 ՁՏՏ. խնդրել զվրեժս ի թշնամեաց դստերն

7 Ձ. չիք զնա

8 ՁՏՏ. ուրախութիւնն վասակայ

9 Ձ. հաստատելոյ

10 Ձ. խնդրուածօք